«Առաջին լրատվական» էլեկտրոնային լրատվամիջոցի 22.05.2015թ. «Աբովյանում կեղծ Արթուր Գեղամի Հարությունյանն ինքնաբացարկի դիմում է գրել, սակայն Ծառուկյանի սպառնալիքներից հետո հետ է վերցրել դիմումը» հոդվածի կապակցությամբ

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղեկացնում է, որ հրապարակման փաստերը չեն համապատասխանում իրականությանը:

Ոչ քաղաքացի Արթուր Գեղամի Հարությունյանը, ոչ վերջինիս անունից լիազորված որևէ անձ, ոչ նրա լիազորված ներկայացուցիչը թեկնածուի գրանցումից հետո մինչ այս պահը չեն այցելել թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և չեն ներկայացրել որևէ, այդ թվում, ինքնաբացարկի դիմում: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որևէ աշխատակից այսօր առավոտյան չի մեկնել Աբովյան քաղաք:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով